

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՍԵՅՍՄԻԿ ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ

1. Հիմնախնդրի ներկա վիճակը. Սեյսմիկ վտանգի տարբեր մակարդակների դեպքում հնարավոր մարդկային և նյութական կորուստների հավանականությունը որոշվում է, նկատի ունենալով երկրաշարժի հետևանքով բնական և տեխնածին ռիսկերի առկայությունը համապատասխան ոլորտում, կորուստների քանակը և ռիսկի ներգործության ժամկետը: Գոյություն ունեն սեյսմիկ իրադարձություններից առաջացած բնական և տեխնածին ռիսկերի գնահատման բազմաթիվ եղանակներ: Այդ ռիսկերը գնահատվում են տարբեր մեթոդիկաներով և մշակվում են տարբեր համակարգչային ծրագրերով: Բացի այդ, ստեղծված չէ հնարավորություն՝ ստանալ ամփոփված տեսքով բոլոր առկա ռիսկերի գնահատման գումարային արժեքները և որակական բնութագրերը:
2. Հիմնախնդրի էությունը. Առկա է գումարային սեյսմիկ ռիսկի մակարդակի գնահատման նոր եղանակի մշակման և համակարգչային ծրագրավորման անհրաժեշտությունը՝ սեյսմիկ ռիսկի բազմագործոնային գնահատման համար:
3. Ծրագրի նպատակը և հիմնական խնդիրը. Ներկայումս, ելնելով Հայաստանի բնական, դեմոգրաֆիկ և ենթակառուցվածքների վիճակից, անհրաժեշտ է սեյսմիկ ռիսկի բազմապարամետրային գնահատման համար ստեղծել սեյսմիկ ռիսկի մակարդակի գնահատման և քարտեզի մշակման նոր միասնական մեթոդաբանություն և համապատասխան համակարգչային ծրագրային փաթեթ: Նոր մեթոդիկան պետք է ներառի ցանկացած ոլորտի ռիսկի գնահատման ալգորիթմեր, համաձայնեցված համապատասխան ոլորտի մասնագետների կողմից: **Համակարգչային** ծրագրային նոր փաթեթը պետք է աշխատի **Վինդոուզ** (WINDOWS) համակարգի ներքո, ունենա տվյալների և ալգորիթմների շտեմարան, քարտեզագրման միջոցներ **ԱՏՀ** (GIS) միջավայրում, ավելի արագ ու ճշգրիտ գնահատելու ռիսկերը Հայաստանի ցանկացած վայրում: Ծրագրային նոր փաթեթը պետք է լինի նաև բաց նոր ծրագրային հավելվածներ կցելու համար:
4. Աշխատանքների իրականացման ընթացքը. Համակարգը ստեղծելու համար անհրաժեշտ է կատարել հետևյալ միջոցառումները՝ համալրել տվյալների շտեմարանը, ստեղծել ալգորիթմների շտեմարան, մշակել սեյսմիկ ռիսկի գնահատման միասնական մեթոդաբանություն, ստեղծել ռիսկերի գնահատման ելակետային քարտեզներ, մշակել վտանգին համապատասխան հնարավոր իրավիճակներ, հաշվարկել բոլոր հնարավոր ռիսկերը և ստեղծել հնարավոր կորուստների վերջնական քարտեզներ: Որակական փոփոխությունների գնահատման համար ներդնել փորձագիտական գնահատականների մեթոդը, հաշվի առնելով չափանիշների կշիռները:

5. Միջոցառումների իրականացումը, կատարողները և միջոցառումների իրականացման ժամանակացույցը ներկայաված է ստորև բերված աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Միջոցառումները	Կատարողները	Ժամանակացույցը
3	4	5
<p>1. տվյալների շտեմարանի համալրում,</p> <p>2. ալգորիթմների շտեմարանի ստեղծում,</p> <p>3. սեյսմիկ ռիսկի գնահատման միասնական մեթոդաբանության մշակում,</p> <p>4. ռիսկերի գնահատման ելակետային քարտեզների ստեղծում,</p> <p>5. սեյսմիկ վտանգին համապատասխան</p>	<p>ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն</p> <p>ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)</p> <p>ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն</p> <p>ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)</p> <p>ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն</p> <p>ՀՀ արտա-</p>	<p>Ֆինանսավորումից հետո յուրաքանչյուր միջոցառման համար նախատեսվում է միջինը 1,5-2,0 ամսվա ժամանակ, մեկ տարվա ընթացքում:</p>

<p>հնարավոր իրավիճակների մշակում,</p>	<p>կարգ իրավիճակների նախարարություն ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)</p>	
<p>6. բոլոր հնարավոր ռիսկերի հաշվարկում և հնարավոր կորուստների վերջնական քարտեզների ստեղծում,</p>	<p>ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)</p>	
<p>7. Ծրագրով աշխատելու մեթոդական ուղեցույցի մշակում:</p>	<p>ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)</p>	

6. Մեթոդական ուղեցույցը հաստատվում է Լիազոր մարմնի ղեկավարի կողմից:
7. Ծրագրի կատարման տևողությունը և ֆինանսական ապահովումը. Նախատեսվում է աշխատանքները կատարել ֆինանսավորումից հետո 12 ամսվա ընթացքում, ՀՀ պետական բյուջեից երկու միլիոն դրամ կողմնորոշիչ ֆինանսավորմամբ:
8. Ծրագիրն ամփոփ ներկայացված է ստորև բերված աղյուսակ 2-ում:

Աշխատանքի անվանումը	Ակնկալվող արդյունքը	Կատարողը	Համակատարողը	Ժամանակացույցը	Ֆինանսավորման չափը (հազար դրամ)
1	2	3	4	5	6
<p>Առկա համակարգչային ծրագրերից ընտրված և Հայաստանի Հանրապետության տարածքում սեյսմիկ ռիսկի առաջացման հնարավոր բոլոր գործոնների հաշվառմամբ, նոր մշակված միասնական մեթոդիկայի հիման վրա սեյսմիկ ռիսկի մակարդակի գնահատման համակարգչային ծրագրային փաթեթի ստեղծում:</p>	<p>Սեյսմիկ ռիսկի առաջացման հնարավոր բոլոր գործոնների՝ շենքերի և շինությունների ավերման, հրդեհների, երկրաշարժի հետևանքով այլ երկրորդային վտանգների առաջացման ռիսկի հաշվառմամբ սեյսմիկ ռիսկի մակարդակի գնահատման միասնական եղանակի մշակման և համակարգչային ծրագրավորման փաթեթի ստեղծման արդյունքում ակնկալվում է սեյսմիկ ռիսկի առավել ճշգրիտ գնահատում և քարտեզագրում, սեյսմիկ ռիսկի գնահատման եղանակի կատարելագործում:</p>	<p>ՀՀ ԱԻՆ</p>	<p>ՀՀ ԳԱԱ (համաձայնությամբ)</p>	<p>Ֆինանսավորումից հետո մեկ տարվա ընթացքում</p>	<p>2000.0 (երկու հազար) դրամ</p>